

ՍՈՎԵՏԱԼԱՅ ՊՈԵԶԻԱՅԻ ԼԵԶՎԱԿԱՆ ՄԻ ՔԱՆԻ
ԱՌԱՆՁՆԱԼԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Վ. Խ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

20-ական թվականներից հետո ընկած ժամանակաշրջանը խիստ նշանակալից եղավ հայ գրականության և դրական լեզվի զարգացման համար։ Ողջիալ-տնտեսական և քաղաքական կյանքում տեղի ունեցած լուրջ տեղաշարժերը արմատական փոփոխություն առաջացրին նաև ժողովրդի հոգևոր կյանքում։ Որակական փոփոխություն, առնականացում ապրեց նաև մեր դրական լեզուն՝ օրրստօրե հաճախվելով ու հարստանալով նորանոր բառերով ու արտահայտություններով։ Սեփական միջոցներով և նոր փոխառություններով հարստացնելով իր բառապաշարը և պատարելագործելով քերականական որոշ օրինաչափություններ՝ ժամանակակից հայոց լեզուն այժմ հազվադեպ է առիթ ունենում դիմելու գրարարին կամ բարբառներին։ Այս ամենի լավագույն ապացույցներից են նաև սովետահայ պոեզիայի, ներկայացուցիչների ստեղծագործությունները՝ իրենց լեզվա-ոճական առանձնահատկություններով։

Համաժողովրդական լեզվի հարստություն, նրա զարգացման ուղենիշը չի կարող հանդիսանալ լեզվա-ոճական այս կամ այն միջոցը, ձևը, դրան նպաստում են բառապաշարը, քերականական իրողությունների ամբողջությունը, արտահայտչական և պատկերավորման միջոցները և այլն։ Դրողից պահանջվում է գեղարվեստական ստեղծագործության մեջ այս ամենի մշակում, կատարելագործում։ Մեր գրական լեզվի և նրա միջոցների այսպիսի կիրառում հանդիսացան հատկապես Իսահակյանի, Չարենցի, Բակունցի, Դեմիրճյանի, Զորյանի, Զարյանի, Սարյանի, Շիրազի, Կապուտիկյանի, Քոչարի, Խանզադյանի, Հ. Սահյանի, Պ. Սևակի և ուրիշ նշանավոր գրողների ստեղծագործությունները, որոնցում գրաբարի և ժողովրդական լեզվի լավագույն տարրերի օգտագործման շնորհիվ այդ հեղինակները հասել են գեղարվեստական խոր ընդհանրացման։

Սովետահայ գրականության, մասնավորապես պոեզիայի լեզվի զարգացման հետ մեկտեղ դեռևս նկատվում են առանձին շեղումներ։ Այսպես, հանդիպում ենք բարբառային բառերի ու բարբառանությունների, որոնց անհարկի ու ավելորդ գործածությունը ստեղծագործությունը պրկում է լիրիկական արտահայտչականությունից, գեղարվեստական հմայքից։ Պետք է շեշտել, որ մանավանդ վերջին երկու տասնամյակում հայոց լեզվին ու նրա զարգացման հեռանկարներին նվիրված բանավեճերի, ինչպես և հասարակական կյանքում տեղի ունեցած առաջընթացի շնորհիվ մեր գրողներից շատերը խուսափում են այդպիսի բառերից, պահպանում հայոց լեզվի օրինաչափությունները, օգտագործում նրա արտահայտչական և պատկերավորման միջոցների հարստությունը։

Հնարավորություն չունենալով մեկ հոգվածի սահմաններում հանգամանորեն քննելու սովետահայ պոեզիայի բոլոր ստեղծագործությունների լեզվի առանձնահատկությունները, կանգ առնենք տաղանդավոր բանաստեղծ Հովհաննես Շիրազի ստեղծագործությունների լեզվական մի քանի առանձնահատկությունների քննության վրա։

Հետևելով համաժողովրդական լեզվի օրինաչափություններին և հատկապես նրա քերականական կառուցվածքին, Շիրազը ձգտում է հարստացնել նրա բառապաշարը նորակազմ բառերով ու բառակապակցություններով, այդպիսի բառերի ու արտահայտությունների միջոցով ստեղծել պատկերավորության ու արտահայտչական զանազան երանգներ։ Բոլոր դեպքերում բանաստեղծը չանում է հարազատ մնալ հայոց լեզվի՝ դարերի ընթացքում մշակված ու օրինականացված քերականական կանոններին։ Որքան էլ այս երևույթը պարտադիր ու օրինաչափ է գրողի համար, այնուամենայնիվ, լեզուն նույնիսկ իր քերականական կառուցվածքով բացարձակ նույնական ու սանխախտելի է չէ, որովհետև ձևարանական կամ շարահյուսական միևնույն իրողությունը տարբեր գրողների լեզվում կարող է տարբեր ձևավորումներ ստանալ։ Շիրազը, բնականաբար, նախընտրում է այն ձևերը, որոնք կենսունակ են և առաջադիմելու մեծ հավակնություն ունեն։ Նա համազոր ձևերի մեջ երբեք խտրություն չի գնում, լինեն դրանք բառային թե քերականական։ Բազմաթիվ են այդ ձևերը՝ նրա պոեզիայում. ճերմակ-սպիտակ, ճամփա-ճանապարհ-ուզի, ոտ-

ոտք, ձեռ-ձեռք, արցունք-արտասուք, արյուն-արուն, որովհետև-քանզի, զմրուխտե-ղմրուխտյա, ոսկե-ոսկյա, արյամբ-արյունով, տվաւ-տվեց, մեղանից-մեզէից, մանկան-մանուկին, մահվան-մահի, ծնկան-ծնկի, այրի-այրե-այրիր, ասի-ասացի, եկ-արի, մահանալ-մեռնել, մի էրգի-մի եր-գիր-մի երգե, նստեք-նստեցեք, խմեք-խմեցեք և այլն:

Գոյականի հոլովման և թվի կազմութիւնը Շիրազի ստեղծագործութիւններում համապատասխանում է համաժողովրդական լեզվի այդօրինակ իրողութիւններին: Գոյականների հոգնակին կազմելիս, որպես կանոն, միավանկների վրա ավելացնում է «եր», բազմավանկների վրա՝ «ներ» հոգնակերտները, դետեր, ձիեր, ձայներ, թփեր, վշտեր, ձյուներ, և՛ անցորդներ, ծաղիկներ, լեզուներ, անապատներ, գազաններ և այլն: Հաճախ Շիրազը, անտեսելով այս ընդհանուր իրողութիւնը, դիմում է գրարարյան կամ բարբառային ձևերի, որոնք, սակայն, ոճական արժեքի տեսակետից կոնտրաստում արդարացնում են իրենց: Այսպես, գրարարյան «ք» հոգնակերտով է կազմում «թշնամի» գոյականի հոգնակին, թեև բազմաթիվ են սովորական ձևերը.

Երբ ԹՇՆԱՄԻՔ վրա տան, Ախպուր իրկունեն ու քուրն է (ՔՀ, 17):

«Ծամփա» բառը նույնպես գործածում է գրարարյան հոգնակերտով.

Ու պարտք մնացինք բոլոր նամիկին
Դու ինձ, ևս՝ ներող մեր հայրենիին (ՔՀ, 22):

Որ «ք» հոգնակերտը խտացնում է զգացմունքը, ուժեղացնում ու նպատակային է դարձնում բանաստեղծական խոսքը՝ նրան տալով հարկավոր հնարավորիւն, անժխտելի է: Այդ մասին է վկայում այն փաստը, որ ոտ, ձեռ, աչ և նման շատ գոյականներ Շիրազն առանց «ք»-ի չի գործածում:

Խիչ ժամը հասնի բարձրանանք սափով... (ՔՀ, 64):

...Որ չես ուզում ոտիդ դնել... (ՔՀ, 89):

«Հյուս» գոյականի հոգնակին գերազանցապես կազմում է գրարարյան ձևով.

Եվ իրենց զլխին սառած ՀՅՈՒՍՔԸ ձյան... (ՔՀ, 52):

Բայց հաճախ էլ գրարարի հոգնակի ձևի վրա ավելացնելով «եր» հոգնակերտը, գործածում է միանգամայն այլ նպատակով, որտեղ «ք»-ն արդեն սոսկ հոգնակերտ չէ, այլ ոճական միջոց.

Գիշերն անա սև հյուսիւրբ փանդեց հր քալի ուսերին,
Կախեց լուսնի օղն ականջից՝ ինչպէս աւար զեղունին (ԼԲ, 36):

«Որդի» գոյականի հոգնակին կազմում է «ներ» վերջավորությամբ, բայց հանդիպում ենք նաև «ք» հոգնակերտով:

— ՈՐԻՒՔ կովից չլին դարձել... (ՔՀ, 71):
Ձեր փառքի համար վայելեք, ՈՐԻՒՔ... (ՔՀ, 93):

«Ջրադաջ» բառը գործածում է երկուստեք ժամանակակից հայերենին խորթ՝ և՛ բարբառային, և՛ գրարարյան «ք» հոգնակերտով.

Բայց սփռփանքն է իմ սրտի,
Այն, որ ջրադայք ևմ դարձնում... (ՔՀ, 243):

Սակայն հիմնականում «ջրադաջ» և «ջրադացներ» եզակի և հոգնակի դրական ձևերն է նախընտրում:

«Կյանք» գոյականը «Քնար Հայաստանի» (գիրք առաջին) ժողովածուում Շիրազը գործածել է 75 անգամ, որից միայն երկու անգամ գրարարյան հոգնակի սեռականով.

Ու ԿԵՆԱՅ պտուղն հանապազօրյա
Իւ տառապանքի անտառում դտավ... (ՔՀ, 456):
Ինձ ԿԵՆԱՅ փշրանքը պարգև տվեցին... (ՔՀ, 90):

«Աշխարհ» գոյականի հոգնակին գործածում է թե՛ գրական, թե՛ բարբառային ձևով.

Այնպես տոշորվեց և հողը ԱՇԽԱՐՀՔԻ... (Ն. Տ. 475):

Գաւրուն արեղ տաւ ԱՇԽԱՐՀՆԵՐԻՆ... (ՔՀ. 100):

«Ում» (ն) բայական վերջածանց ունեցող մի շարք գոյականների հոգնակին Շիրազը կազմում է գրարարածն՝ ձգտելով ստեղծել հանդիսավոր ոճ.

Գտավ հյուլէի հոլովումն անման.

ՇԱՐԺԱՍՈՒՆՔՆ անընդմեջ ու դարեր խորհեց... (ՔՀ. 457):

Ըայց գերակշռողը սովորական ձևերն են, երբ գոյականաբար առնված դերբայները հոգնակի են դառնում գոյականին հատուկ «ներ» հոգնակերտ վերջավորությամբ.

Ոճական նպատակով հոգնակի ձևով գործածում է Երկինք, ամի, մահ, դաւուն, արև և նման այլ գոյականներ, որոնք չունեն հոգնակի.

Ինձ վաղուց է ցած բերել ՆՐԻՆՔՆԵՐԻՑ բյուրեղի (ՔՀ. 151):

Անխտիւր «ներ» վերջավորությամբ է կազմում նաև այն գոյականների հոգնակին, որոնք գրարարում ունեցել են «ն» վերջահնչյունը (դառներ, ծնկներ, հարսներ (ՔՀ. 142, 149):

Մի քանի խոսք էլ գոյականների հոլովման համակարգի մասին.

Շիրազի պոեզիայում, ինչպես նկատելի է, մի շարք գոյականներ օգտագործվում են տարբեր հոլովումներով. Այսպես՝

Գառան մայոցն է դալիս... (ԱԽ. 22):

Ուրպես անշար մի ԳԱՌԻ՝

Ինձ քայում է սրնգի երազանուշ երգը տաւրգ (ՔՀ. 47):

Ինչպես նաև՝ արյուն, անկյուն, ծունկ, բնկեր, սյուն և այլ ուրիշ բառեր, որոնց գործիական հոլովաձևը նույնպես միօրինակ չէ.

էլ ԱՐՅՈՒՆՈՎ չկարմրի քող վաճա ծովն իմ վճիտ.

Ո՛ւ էլ ԱՐՅԱՆ մի սև կակաշ բնկնի ձյունին այս լեռան (ՔՀ. 2, 173):

Իւ արցունքի պես սրբելով բնկեց... ցավերն ԸՆԻՆԵՐՈՋ... (Ն. Տ. 453):

Դարդս տվի ԸՆԻՆԵՐԻՍ, բնկերս շառավ... (Ն. Տ. 57):

Խոսքը առնականություն, թանձրություն և գեղարվեստական այլ երանգներ է ստանում, երբ հատկապես գործածում է գրարարի սեռական հոլովի հոգնակի ձևեր, դրանցով դրսևորելով գրարարի հնատիպություն, հանդիսավորություն, դասական ոճի հմայք.

Այսպես՝ կամփր ուղղոց, լույսն աշաց, բույեր նախնյաց, կամփր դստեր և այլն (ՔՀ. 28, 91, 238, 401): Սակայն սովորական շարահասությամբ էլ ժամանակակից գրական հայերենի այդօրինակ ձևերը բանաստեղծի երգերում հատուկ ոճական արժեք են ներկայացնում, ինչպես. աղբկա գեղեցկություն (25), հույսի ճրագ (30), սիրո կամուրջ (33), գարնան երազներ (35), փարի ծաղիկ (39), ջահելության ցնորք (43), հոգու տրտունջ (51), ձյան հյուսք (52), վշտի ծովեր (57), փորձության ամպ (72), յաթաղանի շաշեր (74) և այլն (Ք. Հ., 1):

Արգի հայերենում գոյականների մեծ մասը գնում է «ի» հոլովման տակ. Շիրազը, սակայն, Լրբեմն «ի» հոլովման գոյականը թեքում է որևէ այլ հոլովիչով, որը գրարարի և արևմտահայերենի, մասամբ էլ իր հայրենի կարևոր արբառի ազդեցության հետևանք է.

էս ի՞նչ ԻԱՐՈՒ հասանք... (ԱԽ. 14):

...Թե՛ «Հէյ, բարո, բա՛վ չէ մենակ

Պանդուխտ մնաս ԱՄՊԵՐՈՒ տակ... (ՔՀ. 326):

Վաճա, Ուսանա ձևերը գրարարյան «Ա» վերջադրական հոլովման են պատկանում և քարացած մնացել են ժամանակակից հայերենում. Շիրազը հաճախ գրարարյան այդ հոլովաձևով է թեքում նաև այլ գոյականներ (Ախթամարա, Սիփանա, Սասունա, Վարազա, Աստղկա և այլն): Նախասիրությունը, անշուշտ, ոճական նպատակ ունի. Հոգնակի թվի սեռական հոլովի գրարարյան վերջավորություններով է թեքում մի շարք գոյականներ, որով նույնպես ոճական-արտահայտչական, հաճախ էլ տաղաչափական նպատակ է հետապնդում.

Հեյ վախի բույն ուրաւնոց.

Դու խորք մայր բո ՈՐԴՈՑ (ՔՀ, 417):

Անմեղ ինչպէս ՄԱՍՍՅԱՅ ձյուններ (Ն. Տ. 377):

Սրտիս ՅԱՂԿԱՆՑ մի փունջ Ես դու, իմ բալիկ (Ն. Տ. 204):

Ու վիճում եմ մեր ԱՆՎԱՆՑ հետ... (Ն. Տ. 433):

Այսպէս օգտագործված են նախնայաց, կենաց, սրտանց, շարժմանց, զալոց, վրաց, աչաց ձևերը, որոնց մի մասն արգեն գիտակցվում է որպէս ածական:

Շիրազի գործածած բազմաթիվ ածականներից շատերը նորակազմ են, որոնց բաղադրիչներն ամենատարբեր խոսքի մասեր են: Նա գոյականներից, բայից և այլ խոսքի մասերից ածականներ է կազմում նաև դժ, ան, ապ, չ, ուն, վուն, ական, ակի, ային, ավետ, ավոր, գույն, կոտ, յա, և, ոտ և այլ ուրիշ ածանցներով, նորակազմ բառերին (ածականներին) վերադրելով նոր պաշտոն, նոր իմաստ: Վերոհիշյալ ածականակերտ ածանցներից Շիրազն առանձնապէս նախընտրում է Ե, յա, ուն վերջածանցները, որոնք ոճական, հուզարտահայտչական տեսակետից ավելի էքսպրեսիվ են: Այդ են հաստատում օրինակները.

ՁՅՈՒՆԵ ծաղիկներ ինձ չեմ հավատա... (ՔՀ, 34):

Մերք աստղիկն Ես հույսիդ մրեում, մերք ԿՈՒՐԱԶՅԱՆ հրազ (ՔՀ, 2, 239)

...Մի համբույրիդ հետ փոխելի անմահութունն իմ ՆՐԱԶՈՒՆ (ՔՀ, 390):

«Յա», «ե» ածանցներով կազմված հարարերականները, ի տարբերություն մնացած ածանցներով (ուն, ակի, իկ, ան, կոտ և այլն) կազմված ածականների, գործողության հատկանիշ ցույց չեն տալիս, այլ միայն գրվում են առարկայի անվան մրա և փոխարեական իմաստով հատկանշում այն:

Երկու խոսք էլ գոյականների և ածականների հնչյունափոխության մասին: Ու, ի ձայնավորները, ույ, յա երկհնչյունները ածանցման, բառարարգման և թերման ժամանակ Շիրազը կանոնավորապէս հնչյունափոխում է. լուսաստղ, հուսախար, համբուրել, հովվի կանչ, աղջկա ձայն, սրտի խոսք, լեզվի և այլն (ՍԽ, 21): Երբեմն, սակայն, տաղաչափական կամ ոճական նկատումներով հնչյունափոխության իրողությունը խախտում է: Օրինակ՝ ծնունդով, ծնունդի (ՔՀ, 457), լուսաղբյուր (Ս, 6), բույներ («Աղափնիները Ես են գալիս իրենց բույները» (ՔՀ, 56), լուսաղալիս («Մեր է ցողունը քո լուսաշաղախ...» (ՆՀ, 21):

Շիրազի պոեզիայում դերանուններն իրենց լեզվա-ոճական, քերականական դրսևորումներով հիմնականում հարազատ են համաժողովրդական լեզվի իրողություններին, սակայն նկատելի է, որ երբեմն ոճական-արտահայտչական նախասիրությունն ու քերականական իրողությունները չեն համընկնում:

Բայի խոնարհման, խնդրաոճության, ինչպես նաև կազմության ձևերը Շիրազի պոեզիայում հիմնականում ճիշտ են և համապատասխանում են ժամանակակից հայերենի կանոններին: Հազվագյուտ են ներկա և անցյալի անկատար ժամանակների՝ անկատար դերբայի «իս» վերջավորությամբ կազմված երկրորդական բաղադրյալ ժամանակների ձևերը՝ «մեռնելիս լինեմ», «փախչելիս է եղել», «անցնելիս լինես» և այլն:

Երեք-չորս տասնամյակ առաջ մեր գրական լեզվում տալ, ասել, բերել, դնել, անել և մի քանի այլ բայերի սահմանական եղանակի անցյալ կատարյալի եզակի երրորդ դեմքի զուգահեռ ձևերը (ստավ-ասաց, արավ-արեց, բերավ-բերեց, տվավ-տվեց, դրավ-դրեց) հավասարապէս գործուն էին: Առաջին ձևերը ժամանակակից հայոց լեզվում սակավ գործածության պատճառով իրենց տեղը զիջել են երկրորդ ձևերին: Իսկ այս իրողությունը Շիրազի պոեզիայում նույնպէս նկատելի է, բայց և այնպէս հանդիպում ենք բարբառային երանգ ունեցող անցյալական ձևերի, որոնք գալիս են խոսակցական լեզվից.

...Բայց իր ոխը ԶՊԱՂԱՎ (ՍԽ, 49):

...Մի գառկ ու մի շունչ ԱՐԱՎ (ՆՏ):

Սրբեց արցունքը Ե այսպէս ԱՍԱՎ (ՔՀ, 142):

Բարբառային երանգ ունեն նաև բացիլ, լացիլ և նման մի քանի բայերի անցյալ կատարյալի՝ Շիրազի բազմաթիվ ստեղծագործություններում գործածված «բացի», «բացիր», «բացեք», «բացին», «բացի», «բացիր» և այլ պարզ ժամանակաձևերը.

Նրբ սոցոցում աչքս բացի, Մասիս սառերը հեռվում տեսա,

Կերված տեսա ու Ես լացի. հայոց ցավերը հեռվում տեսա... (ՔՀ, 158):

Անցյալ կատարյալի հիմքը (լսեց, բերեց, քնեց, ծաղկեց, սիրեց և այլն) իր վրա ընդունում է տարրեր ղեմքի և թվի վերջավորություններ (ի, իր, ինք, իք, ին)։ Այս օրինաչափության խախտումը առաջ է բերում բարբառային ձևեր (բացի, լացի, ասի և այլն), որոնց հանդիպում ենք Շիրազի ստեղծագործություններում։

Հրամայական եղանակի հոգնակին կազմում է թե՛ ցոյական, թե՛ անցոյական.

Ետ ՔԱՇԼԵՅՑԵ մի վայրկյան... (ՔՀ, 188)։
ԽԱՅԹԵՅՑԵ ժամն է ձեր ահազնուրյան (Ն. Տ, 122)։

Եվ՝

Գուր գորհերիս հետ խումեմ, անտառներ,
Օվկիաններ, ԲԱՅՑԵ անդունդները ձեր... (Ն. Տ.)։

Շիրազի նախասիրությունը, որքան էլ այն չի համապատասխանում ժամանակակից հայերենի հրամայական եղանակի հոգնակի ձևերի կազմությանը, անցոյական ձևերի կոդմն է։ Նա հրամայականի հոգնակին գերազանցապես կազմում է ոչ թե անցյալ կատարյալի, այլ անորոշ դերբայի հիմքից (նետեք, համբուրեք, հյուսվեք, լոնք և այլն)։ Այս ձևերը բազմաթիվ են Շիրազի պոեզիայում, իսկ անցյալ կատարյալի հիմքից կազմված «ե» խոնարհման բայերի հոգնակին՝ հատուկեևս։

ՊԱՏՄԵՔ, ծաղիկներ, վիշտս ամենիմ (ԵԳ, 87)։

Վերոհիշյալ «կանոնին» են ենթարկվում բանաստեղծի գործածած անկանոն բայերն անխտիր.

Ճամփա տվեմ, ճա՛վ ու հո՛վեր,
Ճամփա տվեմ, քա՛ր ու կապան (ՔՀ, 13)։

«Ճալ» անկանոն բայի ճիշտ ձևերից բացի հանդիպում ենք նաև «տու», «միք տա» բարբառային ձևերի.

Աղբյուր ջան, իմ բախտը տու ինձ նման մի ջահելի (ՍԽ, 8)։
Գրկե-գիրկ միմ տա՛մ սերը... (ՔՀ, 51)։

Առաջին խոնարհման բայերի հրամայականի եզակի թվի «իր» վերջավորությունը մեծ մասամբ փոխում է «ե»-ի, որը հուշարտահայտչական երանգ է հաղորդում գեղարվեստական խոսքին, ելնելով նաև հանգերի համաձայնությունից ու ներդաշնակությունից.

Յուր, ինձ քուրե-քար մի զցի (ՍԽ, 26)։
Իրավ, սիրտ իմ, ինձ քուրե քար մի կարկուռ, ծաղկե-ծաղիկ,
Հազարասեր մեղվի նման էլ ՄԻ ԽՈՒՄԵ ծաղկե-ծաղիկ,
Աշխարհի հետ զնա սիրտ իմ, սեր ՄԻ ԿԱՆՉԵ ծաղկե-ծաղիկ... (ՔՀ, 197)։

Նույն կերպ է կազմում ըղձական, ինչպես նաև պայմանական և հարկադրական եղանակների ապառնիի եզակի թվի երրորդ զեմքի ձևերը՝ հետապնդելով ոճական նպատակ՝ խոսքին տալով վեհություն և հանդիսավորություն.

Մի կյանք ԱՐԺԵ մի համբույրը աղբկա (ՔՀ, 94)։
Մայրս պիտի ղեռ ԳՈՐՄԵ
Գուլպա լալիս բալիկին (Ն. Տ, 68)։

«Ելնել» բայի և՛ ըղձական, և՛ պայմանական ու հարկադրական եղանակաձևերը ճիշտ է կազմում, իսկ «սպասել» բայի հրամայականի «սպասիր» ձևի փոխարեն գերազանցապես օգտագործում է կարևոր բարբառի «կեցիր» ձևը։

ԿԵՑԻՐ մորթենք ու նոր զնա (ՍԽ, 21)։

«Գցել» բայի բաղադրյալ ժամանակաձևերը Շիրազի պոեզիայում բազմաթիվ են. «գցել ենք հողը», «գցել է ուտերին» և այլն, սակայն հանդիպում ենք արևմտահայերենի ձևերի, որոնք ընդունել են նաև լեռնական խոսվածքին.

Քո մատանին ծով զցեր է... (ՍԽ, 23)։

1 Ոմանք այս ձևը գրական են համարում. մենք այդ կարծիքին չենք։

Ըղձական եղանակի հատկապես երրորդ դեմքի բայաձևերի վրա ավելացնելով «թող» եղանակավորող բառը, բանաստեղծը նախադասությունը ոճավորում է հրամայական իմաստով:

Թող զա մեզան իր փառերով... (ՍԽ, 32):
ԹՈՂԵՔ ՄՐՑԻՆ միճչև վերջ (ՀԸ, 22):

Ժողովրդական խոսակցական լեզվի երանդը պահպանելու համար հաճախ պայմանականի ձևերը կազմում է «կու» եղանակիչով, որոնցից շատերը Կուրնո բարրառում գիտակցվում են որպես սահմանականի ձևեր:

...Ման կուզայի դառների մեջ... (պայմանական):
Ու ձյուն կուզա, արյուն կուզա, սև ձյուն
կուզա վառաւ սրտես (սահմանական)
(ՔՀ. 71, 37):

Մնացած խոսքի մասերը (կապ, շաղկապ, ձայնարկություն) հատկապես աչքի են ընկնում իրենց շարահյուսական-արտահայտչական և ոճական նորհրանգներով:

Այժմ անդրադառնանք Շիրազի պոեզիայի լեզվի շարահյուսական մի քանի իրողություններին:

Նախ՝ խնդրառության մասին: Շիրազի պոեզիայում հատկապես ճկուն են կրկնասեռ բայերը: Օրինակ՝ «լացել» բայը Շիրազը գործածում է մերթ ներգործականի, մերթ շեղոքի խնդրառությամբ.

Ինձ հետ վշտացել ու շատ ես լացել (ՀԸ, 47):

Ծվ՝

Մոռա աշխերն են լացել կոտորածները հայկական (ՔՀ, 86):

Բանաստեղծը հաճախ «ստիպում» է շեղոք բային ուղիղ խնդիր առնելու, որը ննացած էրևույթ պետք է դիտել մեր լեզվում.

Այս. ո՛վ գիտես, քե ՍԱՐԻՆ ԴՈՒ ԳԱՌՆԵՐ ԵՍ ԱՐԱՄԵԼ...:

Հեղինակի նախասիրությամբ առնված տեղի պարագան (սար) պետք է ոչ թե տրական, այլ ներգոյական հոլովով լինի, իսկ բայն էլ (արածել)՝ պատճառական:

Որպես «կանոն», առանձնապես չափածո խոսքում, նախադասության անդամների սովորական շարադասությունը խախտվում է տաղաչափական և ոճական նկատառումներով: Այդ տեսակետից Շիրազի պոեզիայում հատկապես ճկուն են որոշիչն ու որոշյալը, հատկացուցիչն ու հատկացյալը, որոնց շրջադասությամբ բանաստեղծը նախադասությունը տալիս է հարկավոր արտահայտչականություն՝ շեշտի տակ պահելով հատկապես որոշյալը կամ հատկացյալը: Օրինակ՝

Պահիր ԱՆՈՒՆԻ ՀԱՅՐԵՆԱԹՈՒՐ,
Պահիր ԱՍՏՂԻՆ ԱՄՆԵԱԳԵՂ,
Այս ՄԱՐԳԱՐԻՏԵ ԻՄ ԾՈՎԱԳԱՆՁ (ՔՀ, 445):

Կամ՝

Անունն անոամ օձի նման
Փաքաքված վիջն ՀԱՅԱՍՏԱՆԻ,
Այրոզ ՀՈՒՇՆ էՐ այն ՍՈՒԼԹԱՆԻ... (ՔՀ, 441):

Երևույթը, այնուամենայնիվ, չի հաստատում, թե բանաստեղծն ընդհանրապես խուսափում է նախադասության անդամների, կոնկրետ դեպքում որոշիչի և որոշյալի, հատկացուցիչի և հատկացյալի սովորական շարադասությունից կամ՝ այդպիսին ոճական պակաս արժեք ունի:

ՈՂՁ ՏԻԵՋԵՐՔԸ ԿԱՊՈՒՅՏ ՄԻ ՏԱՃԱՐ՝
ԱՆԹԻՎ ՄՈՒԲԵՐՈՎ ՎԱԹՎՈՎ ԱՍՏՂԵՐԻ (ՔՀ, 2, 282):
ԻՄ ԱՐԱՐԱՏ ՍՈՒՐԲ ՍԱՐԸ ՎԵՍ
ՄԵՐ ՆԱԽԱՀԱՅՐ ՀԱՅԻՆ է ԿԱՐՄԵՍ... (ՔՀ, 459):

Շիրազի ստեղծագործություններում գերակշռություն ունեն հատկապես պատմողական նախադասությունները, ի՛նչ նորհրանգներն արտահայտելու համար նա հաճախ է դիմում և՛ հրա-

մայական, և՛ բացականչական, և՛ հարցական, ինչպես նաև ոճական նպատակներով՝ միակազմ-
անվանական, անդեմ, անենթակա, թերի կամ բաց նախադասությունների.

Հե՛յ, վախ. իրավ. թե աստված կար,
Ինչո՞ւ չէր տա դեք մի նշխար... (ՔՀ. 248):
Կանգնեցե՛ք նժույզներ, Բաբայե՛ք հավետ,
Թող հավերժ բարախե սիրտը կյանքի հետ (ՔՀ. 239):
Ե՛յ, ջուր տվե՛ք, ջուր տամ, ուրախ ջուր... (Ն. Տ. 232):

Թերի, անդեմ, անենթակա կամ որևէ զեղչված անդամով նախադասության ոճական ար-
ժեքը նրա սեղմության, առնականության և շեշտվածքի մեջ է: Շիրազը այդպիսի նախադասու-
թյունները օգտագործում է հենց այդ նպատակով:

Ենթակայի զեղչումով է գրված հանրահայտ «Բիրլիական» պոեմի ամբողջ առաջին մասը.
Իրտեղ օգտագործված «արարիչը» (անհայտ ոգին) ենթական ընդհանուր է 15 պարզ նախա-
դասության համար:

Երբ անհայտ ոգին՝ աշխարհ արարող,
Ու աստված կոչեց դարեր ու դարեր
Ստեղծեց երկինք, արե, ծով, ու հող... (ՔՀ. 453):

Եվ այսպես մնացած տողերը՝ առանց ենթակայի: Շատ հաճախ էլ Շիրազը նախադասու-
թյան ենթական զեղչում է սահունությունն ապահովելու նպատակով:

Բանաստեղծի պոեզիայում բարդ համադասական նախադասությունները ստորադասակա-
նների համեմատությամբ ավելի գործուն, ավելի էքսպրեսիվ են:

Ավելին՝ պոեմներում և ծավալուն բնույթի բանաստեղծություններում ընդհանրապես արձակ
ստեղծագործություններին հատուկ ստորադասականները ձևափոխվում են պարզ՝ դերբայական
դարձվածով արտահայտված նախադասությունների.

Ու մարդը խորհեց և մտո զաշտերից
Փախած զետերը ձորերից հասեց
Եվ անապատված զաշտերում սփռեց... (ՔՀ. 457):
Մոր զրկի մեջ դեռ մեծացող, հսկայացող մանկան պես... (ՔՀ. 115):

Շիրազի պոեզիայում չափազանց կենսունակ են խառը բնույթի նախադասությունները, ըստ
որում, համադասականների համազոր մասերից մեկը կամ մի քանիսը անխտիր պատմողական
են, իսկ մեկ կամ մի քանիսը՝ հարցական, բացականչական կամ հրամայական:

Անցան մեմունչ ու զիչեր,
Աչքս բացի զու թռաւ,—
Ա՛խ, թե սա էլ երազ էր,
Ինչո՞ւ ծառիս արցունք կար (Ն. Տ. 187):

Այլ է ստորադասական խառն նախադասությունների բնույթը: Սրանց գերադաս նախադա-
սությունը կարող է լինել պատմողական, հարցական, հրամայական, բացականչական. իսկ երկ-
րորդական չի կարող լինել ցանկացած հարցական, բացականչական կամ հրամայական նա-
խադասություն²:

Ընդհակառակը, անշաղկապ բարդ ստորադասական նախադասությունների գերադասը պատ-
մողական է, երկրորդականը՝ գերազանցապես հարցական. մասամբ էլ՝ հրամայական կամ
բացականչական:

Ու չգիտեմ՝ ուրի՞ն սիրեմ, ուրի՞ն թողնեմ անհաղ սրտով (ՁՀ. 194):

Շիրազի պոեզիայում նախադասությունների ոճական երանգն ապահովող միջոցներից չա-
փազանց ակտիվ ու կենսունակ է կոչականը.

Երկնքի ՀԱՎՔԵՐ ինձ քեեր տվե՛ք,
Թու՛եմ, հասնեմ ձեզ... (Ե. 71):

2 Ս. Գ. Արրահայան, Ժամանակակից հայերենի շարահյուսության մի քանի հարցեր.
Երևան, 1962, էջ 109:

Կոչականների միջոցով բանաստեղծը դրսևորում է զանազան զգացմունքներ՝ սկսած մեղմ ու անմիջական տրամադրություններից, վերջացրած վիշտ ու թախիծով, հորդորով ու ժողովրդական կանչով, որոնցով հետապնդում է ոճական, արտահայտչական բազմազանություն՝ մերթ հանդիսավորություն, մերթ ուժգնություն, մերթ էլ՝ մտերմիկ ու հանդարտ էպիկականություն. այդօրինակ հնարանքներով ուժեղացնելով գեղարվեստական խոսքի ներգործուն զորությունը:

Վերևում մենք աշխատեցինք ցույց տալ մեր տաղանդավոր բանաստեղծ Հովհաննես Շիրազի ստեղծագործությունների լեզվի ու ոճի մի շարք կարևոր սուանձնահատկությունները: Միայն առիթով կանդրադառնանք սովետահայ ուրիշ բանաստեղծների գործերի լեզվա-ոճական յուրահատկություններին: